որպես նախապես վճարած պետական տուրքի գումար, իսկ մնացած մասով դատական ծախսերի հարցը համարել լուծված:

Հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 189-րդ, 191-րդ, 192-րդ, 234.5-րդ, 234.12-րդ հոդվածներով՝ Դատարանը

Վ Ճ Ռ Ե Ց

1. «Պրոֆ Բիլդ» ՍՊ ընկերության հայցն ընդդեմ ՀՀ Կոտայքի մարզի Ծաղկաձոր համայնքի, երրորդ անձ՝ «ՄԻՆԱՍՅԱՆՆԵՐ ՇԻՆ» ՍՊ ընկերության՝ պատվիրատուի/գնահատող հանձնաժողովի կողմից կայացրած որոշումը, մասնավորապես՝ գնումների պաշտոնական տեղեկագրում 09.10.2024 թվականին հրապարակած հայտերի բացման և գնահատման նիստի արձանագրության 4-րդ և 7-րդ կետերն անվավեր ճանաչելու, մասնակիցների ներկայացրած մրցույթային փաստաթղթերը վերագնահատելուն և հաջորդող տեղ զբաղեցրած մասնակցին ընտրված մասնակից ճանաչելուն պատվիրատուին պարտավորեցնելու պահանջների մասին, բավարարել մասնակի:

1.1. անվավեր ճանաչել գնահատող հանձնաժողովի կողմից կայացրած որոշումը, մասնավորապես՝ Գնումների պաշտոնական տեղեկագրում 09.10.2024-ին հրապարակած հայտերի բացման և գնահատման նիստի արձանագրության 4-րդ կետը (Ընթացակարգի ընտրված մասնակիցներին հայտարարելու մասին) և 7-րդ կետը (Պայմանագիր կնքելու մասին հայտարարությունը):

1.2. Հայցը՝ մնացած մասով, մերժել:

2. ՀՀ Կոտայքի մարզի Ծաղկաձոր համայնքից հօգուտ «Պրոֆ Բիլդ» ՍՊ ընկերության բռնագանձել 100.000 ՀՀ դրամ՝ որպես որպես նախապես վճարած պետական տուրքի գումար:

3. Դատական ծախսերի հարցը մնացած մասով համարել լուծված:

4. Վճիռն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից և կարող է բողոքարկվել Վերաքննիչ քաղաքացիական դատարան՝ հրապարակվելու օրվանից մեկամսյա ժամկետում:

Դատավոր՝ **Աննա Ծիլաջյան**

Տվյալ ֆայլերին կարող եք ծանոթանալ նաև մուտք գործելով "Էլեկտրոնային դատավարություն" համակարգ՝ cabinet.armlex.am